Շախմատի խմբակի տարեկան ծրագիր

2023-2024 ուստարի

Արմավիրի մարզի Առատաշենի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի

Ուսուցիչ՝ Պարգև Մկրտչյան

«Շախմատը դպրոցում»

Խմբակի անվանումը

Առարկա- Շախմատ

Շախմատի արտադասարանական խմբակի ծրագիր 5-9-րդ դասարանի աշակերտների համար

(շաբաթական՝ 2 դասաժամ, տարեկան 68)

Բացատրագիր

«Շախմատ» առարկան սիրում է աշակերտների մեծամասնությունը, սակայն առարկայական ծրագիրը հիմնականում ընդգրկում է խնդիրներ և տրամագրեր, որոնց լուծման համար աշակերտները հանդիպում են որոշակի դժվարությունների: Աշակերտները սիրում և պահանջում են խաղ, որը առարկայական ծրագրում շատ քիչ է ընդգրկված: Բացի այդ, ինչպես գիտենք, շախմատը դասավանդվում է միայն տարրական դասարաններում, իսկ միջին և ավագ դպրոցի աշակերտները միշտ հետաքրքվում են կազմակերպվող մրցաշարերով և առաջարկում են իրենց մասնակցությունը: Ինչպես գիտենք, հաճախ են կազմակերպվում մրցույթներ շախմատից , օրինակ՝ ամեն տարի անցկացվում է շախմատի օլիպիադա դպրոցականների շրջանում, որին մասնակցելու համար աշակերտները պետք է հմտացած լինեն խաղի մեջ, ինչը գործնականում չենք կարող ապահովել դպրոցական դասընթացի ընթացքում: Այդ պատճառով, կարծում եմ, պետք է դպրոցում ձևավորվի «Շախմատի արտադասարնական խմբակ», որին ցանկանում են մասնակցել դպրոցի աշակերտներից շատերը: Նաև դպրոցական ծրագրում չկան շախմատի ստեղծման, տարածման և զարգացման հետաքրքիր փաստերը, ինչը առավել հետաքրքրություն և սեր կառաջացնի աշակերտների մոտ դեպի շախմատը: Խմբակի ծրագրերը պետք է մշակվի այնպես, որի շրջանակներում աշակերտները՝

. կծանոթանան Հայաստանում շախմատի զարգացմանը (Տիգրան Պետրոսյան, Ոսկե հավաքական)

. կդիտարկեն կարճ պարտիաներ, էտյուդներ,

. կմասնակցեն խաղ- մրցույթների:

Ցանկացած թեմա ավելի հետաքրքիր և հիշվող է դառնում, երբ կապվում է առօրյա կյանքի հետ: Խմբակի ընթացքում կդիտարկվեն հետաքրքիր մտքեր շախմատի մասին, կփորձեք դրանք կապել առօրյա կյանքի հետ:

Ծրագիրը նախատեսված է 5-9-րդ դասարանի աշակերտների համար:

Ծրագիրը կազմելիս մասամբ օգտվել են Համլետ Թումանյանի «Շախմատ» 5-9 կամընտրական (նախասիրական) պարապումունքների համար» նախատեսված ուսումնական ձեռնարկից, ակնկալում եմ խմբակի ընթացքում, անհրաժեշտության դեպքում, օգտվել դրանից:

Ծրագիրը մշակված է շաբաթական 2 ժամի համար, տարեկան՝ 68 ժամ

ՈՒսումնական գործընթացն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդման միջոցով:

«Շախմատը դպրոցում» արտադասարանական խմբակի ծրագիր Շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ	
Թեմա 1. Շախմատի ստեղծման պատմությունը և տարածումը: Շախմատը Հայաստանում (10 ժամ)	
Նպատակը	1. Աշակերտներին ծանոթացնել շախմատի ստեղծման պատմությունը և զարգացումը 2. Ոգևորել խմբին հայ գրոսմաստերների հաղթանակով և կազմակերպել հայ շախմատիստների հաղթանակած պարտիաների առցանց դիտում և դիտարկում 3. Շախմատային օժգնությամբ սաների բացահայտում
Խնդիրներ	1. Ձևավորել սեր և հետաքրքրություն շախմատ խաղի նկատմամբ՝ ներկայացնելով շախմատ խաղի պատմությունը և զարգացումը: 2. Խթանել աշակերտների որոնողական գործունեությունը 3. Ծանոթանալ շախմատի պատմությանը և զարգացմանը հայաստանում 4. Ձևավորել հաղթանակի հասնելու ձգտում 5. Նպաստել խաղի մեջ աշակերտների ունակությունների զարգացմանը 6. Ձևավորել մարտական ոգի, մրցելու և հաղթելու կամք Կազմակերպել հանդիպում կարգ ունեցող շախմատիստի հետ, ծանքթանալ նրա անցած ուղղուն:
Ակնկալվող վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ 1. Հավաքել Հայաստանում շախմատի զարգացման մասին հետաքրքիր փաստեր և ներկայացնել

	2.Խաղալ շախմատ՝ գրանցելով քայլերը 3.Դիտարկել պարտիան 4.Մասնակցել դպրոցականների շրջանում շախմատի օլիմպիադայի ներդպրոցական փուլին
Բովանդակությունը	1. Շախմատի աշխարհի չեմպիոնները 2. Շախմատը Հայաստանում 3. Տիգրան Պետրոսյան 4. Շախմատի Հայաստանի հավաքականը 5. Հայաստանի շախմատի կանաց հավաքականը 6. Գործնական աշխատանք՝ խաղ- մրցույթ խմբակի աշակերտների շրջանում
Թեմա 2. Կարճ պարտիաների դիտարկում Խաղ-մրցույթ (10ժամ)	
Նպատակը	1. Ծանոթացնել աշխարհի լավագույն շախմատիստների կարճ պարտիաներին 2. Սովորեցնել գրառել և վերլուծել իրենց խաղացած պարտիաները
Խնդիրներ	1. Բացահայտել ուժեղագույներին և նախապատրաստել մրցույթների 2. Ձևավորել մարտական ոգի, մրցվելու և հաղթելու կամք 3. Դիտարկել կարճ պարտիաներ՝ սկզբնախաղից մինչև վերջնախաղ:
Ակնկալվող վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ 1.Վերլուծել պարտիաները, 2. Գրանցած պարտիայից գտնել սխալ կատարած քայլը

	1. Դիտարկել թեման՝ գործնական շախմատից վերցրած նմուշներով
Բովանդակությունը	1. Կարճ պարտիաներ 2. Էտյուդներ 3. Չեմպիոնների վերջնախաղերի դիտարկում 4. Տարբեր պարտիաների դիտարկում 5. Խաղ մրցույթ՝ քայլի գրանցումով
<u>Թեմա 3.</u> Մարտավարական հնարքներ: Վերջնախաղեր: Զոհաբերություն:(40 ժամ)	
Նպատակը	1.Աշակերտներին ծանոթացնել մարտավարական հնարքներին և կիրառություններին խաղի մեջ 2.Խմբին նախապատրաստել մրցույթների
Խնդիրներ	1.Զարգացնել մրցույթների մասնակցելու հմտություններ և կարողություններ: 2.Նպաստել աշակերտների շախմատային դիտողականության զարգացմանը: 3.Զարգացնել մարտավարական, հաշվարկային ունակությունները, ինչպես նաև գեղագիտական ճաշակը 4.Խաղ մրցույթի միջոցով ի հայտ բերել լավագույն 4-ին, խրախուսել, ձևավորել խումբ, որը կմասնակցի օլիմպիադայի
Ակնկալվող Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ 1.Խորացնել շախմատից ունեցած գիտելիքները 2.Գտնել լավագույն շարունակություն դիրքային վերլուծությունների ժամանակ

	1. Մարտավարական հնարքները կիրառել խաղի մեջ 2. Զոհաբերության միջոցով հասնել հաղթանակի 3. Խաղի հնարավոր ելքերից ընտրել լավագույնը 4. Մասնակցել դպրոցականների շրջանում կազմակերպվող շախմատի օլիպիադային՝ ունենալ լավագույն արդյունք:
Բովանդակությունը	1. Գրոհ կենտրոնում մնացած արքայի վրա 2. Ապահովել արքայի անվտանգ դիրք 3. Վերջին հորիզոնականի թուլությունը 4. Գործնական խաղ 5. Ծանր խաղաքարերով վերջնախաղեր 6. Խաղի ավարտ՝ հաղթանակ կամ ոչ-ոքի 7. Ոչ- ոքիի բերող կոմբինացիաներ 8. Մարտավարական հնարքներ. Փղի կանոնիկ զոհաբերություն h7 (h2) դաշտում 9. Մարտավարական հնարքներ. զույգ փղերի զոհաբերություն 10. Մարտավարական հնարքներ. զույգ նավակների զոհաբերություն 11. Գործնական աշխատանք՝ խաղ-մրցույթ,
<u>Թեմա 4.</u> Շախմատը կյանքում: (8ժամ)	
Նպատակը	1. Ներկայացնել շախմատի կարևորությունը կյանքում
Խնդիրներ	1. Գտնել կապեր շախմատի և մեր առօրյայի միջև 2. Ձևավորել մարտական ոգի, մրցելու և հաղթելու կամք 3. Ճանաչել շախմատը, որպես աշխարհում հայտնի դառնալու համար 4. Ձևավորել հաղթանակի հասնելու թիմային մտածելակերպ

	1. Ձևավորել բարոյականություն, արդարություն, ընկերասիրություն, իրար պաշտպանելու կամք, նպատակին հասնելու ձգտում՝ ինչպես սովորեցնում է շախմատ խաղը Այցելել գյուղի տարեց շախմատասերներին, ովքեր խաղում են գյուղի ակումբում, նրանց հետ կազմակերպել ընկերական խաղ, նրանցից հարցնել ե՞րբ և ու՞մից են սովորել շախմատ խաղալ:
Ակնկալվող վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ 1. Ձևավորել համապատասպան վերաբերմունք՝ ընկալելու շախմատը ոչ միայն խաղ, այլ նաև սպորտ, արվեստ, գիտություն (Տիգրան Պետրոսյան) 2. Գտնել կապ կյանքի և շախմատի միջև 3. Նպատակահարմար և արդյունավետ կազմակերպել առօրյան 4. Ստացած տեսական և գործնական գիտելիքները ցուցադրել բաց դասի ընթացքում
Բովանդակությունը	1. Շախմատը կարող է պատմել մեր կյանքի մասին 2. Աֆորիզմներ և հետաքրքիր մտքեր շախմատի մասին 3. Շարադրություն. «Ինչու՞ եմ սիրում շախմատը» 4. Բաց դաս՝ խաղ մրցույթ, ուսումնական տարվա ամփոփում
Միջառարկայական կապեր	
Մայրենի լեզու- Նորածանոթ հասկացությունները կարդալու, դրանք մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված, համոզիչ և հակիրճ արտահայտելու կարողություն: Մաթեմատիկա- հաշվարկներ կատարելու, տրամաբանելու կարողություն: Ֆիզկուլտուրա-մրցելու և հաղթելու կարողություն:	